



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

02 ապրիլի 2021 թվականի թիվ 49-Ա

ք. Երևան

«ՀԻԲԲԻԴ ՍՈՒՅՈՒՇՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 04-Ի ԹԻՎ 38-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության կողմից 2021 թվականի մարտի 10-ին Հանձնաժողով մուտքագրված վարչական բողոքը՝ *պարզեց*.

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ դիստրիբյուտոր) վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 04-ի «ՀԻԲԲԻԴ ՍՈՒՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 38-Ա որոշման (այսուհետ՝ վարչական ակտ) դեմ:

Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքում մասնավորապես նշված է, որ դիստրիբյուտորը դիմում է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ 2021 թվականի հունվարի 01-ից «THT-Comedy», «FRIDAY International», «TB3 International» տեսալսողական ծրագրերի տարածման բացառիկ իրավունքը պատկանում է դիստրիբյուտորին, իսկ «ՀԻԲԲԻԴ ՍՈՒՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությունն (այսուհետ՝ ցանցային օպերատոր) առանց պայմանագիր կնքելու և առանց օրինական հիմքերի 2021 թվականի հունվարի 01-ից մինչև 2021 թվականի փետրվարի 18-ը վերահաղորդել է վերոնշյալ տեսալսողական ծրագրերը՝ խախտելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, իսկ մինչ այդ ցանցային օպերատորը տեսալսողական ծրագրերը վերահաղորդել է «Յուքոմ» ՓԲ ընկերության հետ կնքված լիցենզիոն պայմանագրի համաձայն:

Ըստ դիստրիբյուտորի՝ ցանցային օպերատորի նկատմամբ 2021 թվականի հունվարի 29-ին հարուցված թիվ 2 վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 18-ին իրականացվել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ ցանցային օպերատորի կողմից չեն վերահաղորդվում դիմումում նշված տեսալսողական ծրագրերը:

Սակայն, դիստրիբյուտորի պնդմամբ՝ հանդիսանալով վերը նշված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր, ցանցային օպերատորի հետ տեսալսողական ծրագրերի

վերահաղորդման իրավունքի տրամադրման լիցենզիոն պայմանագիր չի կնքել և/կամ թույլտվություն չի տվել, իսկ ցանցային օպերատորն իր հերթին չի ժխտել վերը նշված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման փաստը, ինչը ակնհայտ է դառնում վարչական ակտից, որտեղ ցանցային օպերատորի բացատրությունների հատվածում բացակայում է որևէ պնդում տեսալսողական ծրագրերի վերահաղորդում չիրականացնելու վերաբերյալ:

Այս կապակցությամբ դիստրիբյուտորը հայտնում է նաև, որ համաձայն «Ռոստելեկոմ» ընկերության կողմից իր պաշտոնական կայքում 2021 թվականի փետրվարի 16-ին տեղադրված հայտարարության՝ վերոնշյալ տեսալսողական ծրագրերի հեռարձակումը 2021 թվականի փետրվարի 18-ից ժամանակավորապես դադարեցվելու է և որպես փաստ նշել է «Ռոստելեկոմ» ընկերության պաշտոնական կայքի հղումը:

Համադրելով փաստերը, վարչական բողոքում դիստրիբյուտորը ևս մեկ անգամ հայտնում է, որ ցանցային օպերատորն առանց լիցենզիոն պայմանագրի 2021 թվականի հունվարի 01-ից վերահաղորդել է վարչական բողոքում նշված տեսալսողական ծրագրերը և միայն Հանձնաժողովի կողմից մշտադիտարկում իրականացնելու օրը՝ 2021 թվականի փետրվարի 18-ին, դադարեցրել է նշված տեսալսողական ծրագրերի վերահաղորդումը, ինչը ակնհայտ է «Ռոստելեկոմ» ընկերության պաշտոնական կայքում տեղադրված հայտարարությունից:

Ըստ դիստրիբյուտորի Հանձնաժողովը բավարար ուսումնասիրություն չի իրականացրել պարզելու, թե նախքան 2021 թվականի փետրվարի 18-ը, արդյոք ցանցային օպերատորն իրականացրել է հեռարձակում, թե ոչ և գտնում է, որ Հանձնաժողովը պատշաճ չի իրականացրել վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության օրենսդրական պահանջը («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդված), ինչի հետևանքով կայացված վարչական ակտը համարվում է ոչ իրավաչափ:

Դիստրիբյուտորը վարչական բողոքով խնդրում է վերացնել Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 04-ին ընդունված վարչական ակտը և կայացնել նոր որոշում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ դիստրիբյուտորի կողմից Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 04-ի թիվ 38-Ս որոշման դեմ բերված վարչական բողոքն ընդունել է վարույթ, քանի որ վարչական բողոքը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածների պահանջներին:

Հանձնաժողովը դիստրիբյուտորի վարչական բողոքի վերաբերյալ 2021 թվականի մարտի 12-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Վարույթի ընթացքում ցանցային օպերատորը 2021 թվականի մարտի 26-ին Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է այն մասին, որ դադարեցրել է «THT-Comedy», «FRIDAY International» և «THT4 International» տեսալսողական ծրագրերի վերահաղորդումը, երբ նշված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի ձեռքբերման նպատակով «Յուքոմ» ՓԲ ընկերության հետ կնքված լիցենզիոն պայմանագրի ժամկետը լրանալուց հետո պարզել է, որ «Յուքոմ» ՓԲ ընկերությունն այլևս չի

հանդիսանում նշված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը և լիցենզիոն պայմանագիրը չի կարող վերականգնվել:

Ինչ վերաբերում է դիստրիբյուտորի նշած «Ռոստելեկոմ» ընկերության կայքի հղմանը, ապա ցանցային օպերատորը հայտնում է, որ այդ տեղեկատվությունը տեխնիկական սխալի հետևանքով է տարածվել, ինչը նկատելուց հետո անմիջապես հեռացվել է:

Վարույթի շրջանակներում ի լրումն 2021 թվականի մարտի 10-ի վարչական բողոքի, դիստրիբյուտորը հայտնել է նաև այն մասին, որ «Ռոստելեկոմ» ընկերության պաշտոնական կայքից հեռացվել է 2021 թվականի փետրվարի 16-ին տեղադրված այն հայտարարությունը, համաձայն որի՝ դիմումում նշված տեսալսողական ծրագրերի հեռարձակումը 2021 թվականի փետրվարի 18-ից ժամանակավորապես դադարեցվելու է (կայքից համապատասխան հղումը նշվել էր դեռևս վարչական բողոքում), իսկ նշվածի համար որպես ապացույց ներկայացրել է «Ռոստելեկոմ» ընկերության պաշտոնական կայքում 2021 թվականի փետրվարի 16-ին տեղադրված հայտարարության արտատպվածքը:

Դիստրիբյուտորը գտնում է, որ ցանցային օպերատորը փորձում է ոչ իրավաչափ գործողություններով խոչընդոտել վարչական վարույթի քննությանը և այդ միջոցով փորձել հասնել իր համար բարենպաստ վարչական ակտի կայացմանը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված լրացուցիչ ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով դիստրիբյուտորի դիմումը՝ 2021 թվականի հունվարի 29-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել էր թիվ 2 վարչական վարույթը: Վարչական վարույթը հարուցվել էր ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրային հիմունքների դիմումում նշված տեսալսողական ծրագրերը վերահաղորդելու փաստով, որոնց տարածման բացառիկ իրավունքը 2021 թվականի հունվարի 01-ից պատկանում է դիստրիբյուտորին:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և արձանագրել է, որ 2021 թվականի փետրվարի 18-ին հեռարձակող կայանում ժամը՝ 12:05-12:15-ն ընկած ժամանակահատվածում ցանցային օպերատորի կողմից չեն վերահաղորդվում դիմումում նշված տեսալսողական ծրագրերը: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Ուստի, Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Հանձնաժողովը

2021 թվականի մարտի 04-ին թիվ 38-Ա որոշմամբ կարճել է ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը:

Անդրադառնալով վարչական բողոքում բերված այն փաստին, որ Հանձնաժողովը չի իրականացրել վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության օրենսդրական պահանջը և չի պարզել, թե նախքան 2021 թվականի փետրվարի 18-ը, արդյոք ցանցային օպերատորն իրականացրել է հեռարձակում, թե ոչ, ապա փաստենք, որ Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է մշտադիտարկում, իսկ ցանցային օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված դրույթներին համապատասխան իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, որի արդյունքում էլ արձանագրել է, որ 2021 թվականի փետրվարի 18-ին խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի կողմից չեն վերահաղորդվում, որն էլ հիմք է հանդիսացել վարչական վարույթը կարճելու համար:

Նշենք նաև, որ Օրենքով ցանցային օպերատորների կողմից իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները պահպանելու համար պարտավորություն սահմանված չէ, և քանի որ վարչական վարույթի շրջանակներում լրացուցիչ ապացույցներ ձեռք չեն բերվել, ուստի Հանձնաժողովի կողմից 2021 թվականի փետրվարի 18-ին ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը վարչական վարույթի շրջանակներում ծառայել է որպես վարչական վարույթի ապացույց և հիմք է հանդիսացել 2021 թվականի հունվարի 29-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը կարճելու համար:

Հանձնաժողովը որպես վարչական մարմին վարչարարությունն իրականացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդված) և Հանձնաժողովի կողմից իրականացվել է իրավաչափ վարչարարություն, իսկ ընդունված վարչական ակտը ընդունվել է Օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ և իրավաչափ է:

Հետևաբար, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքով:

Սակայն, Դիստրիբյուտորի կողմից 2021 թվականի մարտի 10-ին վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքով ներկայացվել են նոր փաստեր և լրացուցիչ ապացույցներ, որոնք վկայում են ցանցային օպերատորի կողմից կատարված իրավախախտման փաստը:

Հանձնաժողովի կողմից վարչական բողոքի հիման վրա ուսումնասիրվել են վարչական բողոքի ընթացքում ներկայացրած լրացուցիչ ապացույցները, որի արդյունքում հայտնի է դարձել, որ «Ռոստելեկոմ» ընկերության կայքում 2021 թվականի փետրվարի 16-ին

տեղադրված է եղել հայտարարություն, այն մասին, որ սույն թվականի փետրվարի 18-ից ժամանակավորապես դադարեցվելու է դիմումում նշված տեսալսողական ծրագրերի հեռարձակումը, որն ավելի ուշ հեռացվել է: Վարչական բողոքի շրջանակներում դիստրիբյուտորի կողմից ներկայացված այս նոր փաստերը և լրացուցիչ ապացույցները վկայում են, որ ցանցային օպերատորը 2021 թվականի փետրվարի 16-ի դրությամբ վերահաղորդել է խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրերը՝ դրանով իսկ խատելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, վարչական բողոքի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի համար պարտավորություն է սահմանված, որ ցանցային օպերատորները Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը կարող են վերահաղորդել միայն տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա, սակայն ցանցային օպերատորն առանց նշված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի հետ պայմանագրի կնքելու վերահաղորդել է դիմումում նշված տեսալսողական ծրագրերը, իսկ ցանցային օպերատորի կողմից վարչական բողոքի շրջանակներում ներկայացված բացատրությունները և պարզաբանումները հիմնավոր և բավարար չեն, իրավախախտման փաստը բացառելու համար, քանի որ «Ռոստելեկոմ» ընկերության կայքում տեղեկատվությունը տեխնիկական սխալի հետևանքով տարածվելու փաստը հիմնավոր չէ:

Հանձնաժողովի կողմից ցանցային օպերատորին տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա և ցանցային օպերատորը վերահաղորդում է Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքով արգելված արարքի կատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ ցանցային օպերատորի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի հատկանիշներին:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում»:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ:

Այսպիսով, Հանձնաժողովն առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացված նոր փաստերով ու ապացույցներով, ցանցային օպերատորի նկատմամբ ընդունում է նոր վարչական ակտ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 49-րդ հոդվածի 1-ին մասի, 57-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասով, 76-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵԶԹ» ՍՊ ընկերության կողմից Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի մարտի 04-ի թիվ 38-Ա որոշման դեմ բերված վարչական բողոքը՝ ընդունելով նոր վարչական ակտ:

2. «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել տույժ՝ տուգանելով 263 460 (երկու հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

4. Ուժը կորցրած ճանաչել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի մարտի 04-ի «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 38-Ա որոշումը:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Վ. ՕՉԱՆՅԱՆ

02 ապրիլի 2021թ.

ք. Երևան